ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2026/156

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 մայիսի 2026 թ. N 156

«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ **«Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ**

Գործունեության հասցեն՝ **ՀՀ, ք. Երևան, Բայրոնի 5**

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ), «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2026 թվականի մայիսի 29-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Քոլեջ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 06 դեկտեմբերի 2024 թ.
վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝ 30 մայիսի 2025 թ.
փորձագիտական այցի իրականացում՝ 15-17 դեկտեմբերի 2025թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 01 ապրիլի 2026 թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում՝ 17 ապրիլի 2026 թ.

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

1. **Արմենուհի Մհերյան** - Հայաստանի Եվրոպական համալսարանի «Ֆինանսներ» ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, փորձագիտական խմբի ղեկավար:
2. **Լիանա Հակոբյան** - Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի քորիոգրաֆիայի ամբիոնի վարիչ, դասախոս, դոցենտ, փորձագիտական խմբի անդամ:
3. **Հարություն Մինասյան** - Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի, Երևանի տարածաշրջանի թիվ 1 պետական քոլեջի դասախոս, փորձագիտական խմբի անդամ:
4. **Անուշ Հարությունյան** - Երևանի պետական համալսարանի ուսանող, փորձագիտական խմբի

անդամ, ուսանող-փորձագետ:

Փորձաքննությունն իրականացվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Գնահատման արդյունքներն են.

Չափանիշ	**Եզրակացություն**
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Բավարարում է
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Բավարարում է
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8. Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Չի բավարարում
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Քոլեջի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտարկումները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երկու անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

I. Քոլեջը ՀՀ պարարվեստի ոլորտում ունի առանցքային դեր՝ ապահովելով դասական, ժողովրդական, մոդեռն պարի և պարի ուսուցման ուղղություններով մասնագիտական կրթության իրականացումը: Քոլեջի կրթական ծրագրերը, դասախոսական կազմը, գործատուների հետ

կապերը և մասնագիտական ռեսուրսները հիմնականում ապահովում են **որակավորումների արժանահավատ շնորհման** համար անհրաժեշտ հիմքերը: Միևնույն ժամանակ Հանձնաժողովը կարևորում է, որ քոլեջը հետագա զարգացման փուլում առավել հստակեցնի կրթական ծրագրերի վերջնարդյունքների չափելի նկարագրությունը, հատկապես պրակտիկ և կատարողական առարկաների մասով: Անհրաժեշտ է, որ գնահատման գործընթացում արտացոլվեն ոչ միայն ուսանողի կատարողական արդյունքը, այլև նրա տեխնիկական պատրաստվածությունը, բեմական մտածողությունը, ստեղծագործական ինքնուրույնությունը, մասնագիտական կարգապահությունը և գործնական կարողությունների ձևավորման աստիճանը: Հանձնաժողովը նպատակահարմար է համարում, որ քոլեջը մշակի պրակտիկ առարկաների, պրակտիկաների և ավարտական քննությունների գնահատման առավել հստակ և միասնական մոտեցումներ՝ ապահովելով, որ շնորհվող որակավորումները հիմնավորվեն ոչ միայն վարպետության փոխանցման փորձով, այլև ուսանողների ձեռք բերած վերջնարդյունքների փաստարկված գնահատմամբ:

II. Քոլեջում ձևավորված է կառավարման կայուն միջավայր, որն ապահովում է կրթական գործընթացի շարունակականությունը, պարարվեստի ազգային ավանդույթների պահպանումը և ոլորտի համար պահանջված մասնագետների պատրաստումը: Միևնույն ժամանակ Հանձնաժողովը արձանագրում է, որ **արդյունքահեն կառավարման** և որակի ապահովման գործընթացներում դեռևս ամբողջությամբ չի ապահովվում ռազմավարական նպատակների, կրթական ծրագրերի զարգացման, ռեսուրսների բաշխման և գործունեության արդյունքների միջև փոխկապակցվածության ու ազդեցության համակարգված վերլուծությունը, ինչի հետևանքով որոշումների կայացման գործընթացը ոչ միշտ է հիմնվում վերլուծված տվյալների և չափելի արդյունքների վրա: Հանձնաժողովը կարևորում է, որ քոլեջը զարգացնի տվյալների հավաքագրման և վերլուծության համակարգը՝ ուսանողների առաջընթացի, պրակտիկաների և ավարտական գնահատման արդյունքների, շրջանավարտների մասնագիտական հետագծի, դասախոսների մասնագիտական զարգացման և գործատուների դիտարկումների վերաբերյալ: Այդ տվյալները պետք է օգտագործվեն ոչ միայն հաշվետվությունների կազմման, այլև կրթական ծրագրերի, կառավարման և որակի ապահովման բարելավման որոշումների կայացման համար:

Քոլեջին անհրաժեշտ է նաև ուժեղացնել ՈԱ համակարգի գործարկումը՝ ապահովելով ՊԻԳԲ շրջափուլի ամբողջական կիրառումը և ներքին ու արտաքին շահակիցների պարբերական ներգրավումը կրթական ծրագրերի, պրակտիկաների, գնահատման և կառավարման գործընթացների բարելավման մեջ:

III. Հանձնաժողովը նպատակահարմար է համարում, որ քոլեջը զարգացման հաջորդ փուլում կենտրոնանա պարարվեստի ոլորտում իր առաջատար դերի ինստիտուցիոնալ ամրապնդման վրա՝ հատկապես հետևյալ ուղղություններով.

- միջազգային և տեղական համագործակցությունները դարձնել առավել համակարգված՝ դրանք կապելով վարպետաց դասերի, շարժունության հնարավորությունների, օտար լեզուների մասնագիտական ուսուցման, դասախոսների վերապատրաստման և կրթական ծրագրերի արդիականացման հետ,
- միջազգայնացումը դիտարկել ոչ միայն որպես համագործակցության առկայություն, այլև որպես կրթական ծրագրերի որակի, ուսանողների մասնագիտական մրցունակության և դասախոսների կարողությունների զարգացման գործիք,
- ուժեղացնել հանրակրթական բլոկը՝ այն կապելով պարարվեստի մասնագիտական պատրաստման հետ,

- հանրակրթական առարկաների միջոցով զարգացնել ուսանողների հաղորդակցական, լեզվական, վերլուծական, թվային և մշակութային կարողությունները՝ աջակցելով նրանց մասնագիտական աճին, շարժունությանը և շարունակական կրթության հնարավորություններին,
- բեմադրական և ստեղծագործական գործընթացների արդյունքներն օգտագործել ոչ միայն որպես կատարողական գործունեության դրսևորում, այլև որպես կրթական ծրագրերի, ուսանողների առաջընթացի և մասնագիտական կարողությունների զարգացման վերլուծության հիմք,
- մասնագիտական վերապատրաստումները դարձնել շարունակական և նպատակային՝ կապելով դրանք պարարվեստի ժամանակակից մեթոդների, բեմադրական աշխատանքի, գնահատման չափանիշների և միջազգային փորձի ուսումնասիրման հետ:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել Քոլեջի Կառավարման խորհրդի կողմից հաստատված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով I, II և III կետերում նշված խնդիրների առաջնահերթ լուծմանն ուղղված գործողությունները՝ ապահովելով հնարավոր ռիսկերի կանխարգելման և կառավարման համապատասխան մեխանիզմներ:
3. Հատուկ ուշադրություն դարձնել կրթական ծրագրերում որակավորումների արժանահավատ շնորհման արդյունավետ ապահովմանը՝ կազմակերպելով բոլոր կրթական ծրագրերի ներքին աուդիտ մինչև հաջորդ հավատարմագրման ժամկետը:
4. Հավատարմագրման կարգի 12.1 կետի պահանջներին համապատասխան 2 տարին մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով հաստատության գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները: Գնահատման արդյունքները քննարկել քոլեջի կառավարման խորհրդում:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին մեկ տարի հետո պարտադիր մշտադիտարկման ենթարկել Քոլեջ - ի գործունեության արդյունավետությունը՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ **Վ. Գաբրիելյան**

29 մայիսի 2026 թ.